## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1954 ՄԱՅԻՍ Թ. 5


ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԷՋ

ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. – Կուսական տարին . 97

ԿՐՕՆԱԿԱՆ

Ն. Ս. ՊԻՈՍ ԺԲ ՍՐԲԶ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻ Շրջաբերական Ս. Կուսին Անարատ Յղութեան հռչակման Ս. դարադարձին առթիւ. (Թրգմ. Գերպ. Սերաբիոն վրդ. Ուլուհօճեան, Ընդհ. Աբբահայր Մխիթ. Միաբանութեան) . 102

ՊԷՀԷՍՆԻԼԵԱՆ Հ. ՅՈՎՍԷՓ. – Ս. Գրիգոր Նարեկացի և Ս. Կոյսը . . . . . 117

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. – Աստուածամօր անհամեմատ երգիչը . . . . . 139

ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. – Մեր Նախնեաց հաւատքը Տիրամօր Անարատ Յղութեան մասին . . . . . . . 155

ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ ԲԺ. Յ. – Ս. Աստուածածնի նուիրուած վանքեր Կիլիկիոյ մէջ . . . 125

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՉՐԱՔԵԱՆ Հ. ՔԵՐՈՎԲԷ. – Ս. Աստուածածին Հայ ճառերու մէջ . . . . . 145

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՏԱՅԵԱՆ Հ. ՂԵՒՈՆԴ. – Մխիթար Աբբահայր երաժիշտ (Ս. Կոյսին նուիրուած շարականներով) . . . . . . . 129

ԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. – Կուսական քնար. – (բանաստեղծութիւններ նուիրուած Ս. Կոյսին) . . . . . . . 114-116

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՄԻՔԱՅԷԼ. – Աննման ծաղիկ. 138

ՃԱՆԱՇԵԱՆ Հ. ՄԵՍՐՈՊ. – Արտաքսում . . 143

» » » – Արուսեակ զուարթարար 144


## SOMMAIRE

1954 Mai N. 5


ARTICLE DE FOND PAGE

*Djanachian P. M.* – L'Année Mariale . 97

RELIGION

*Lettre encyclique de S. S. Pie XII pour l'Année Mariale*, à l'occasion du Ier centenaire de la proclamation du dogme de l'Immaculée Conception (trad. par le R. P. Serapion Dr. Oulouhodjian, Abbé Gen. de la Congr. Mekithariste) . . . . . 102

*Behesnilian P. Joseph.* – St. Grégoire de Narék et la Sainte Vierge . . . 117

*Hovhannessian P. Vahan.* – L'incomparable poète de la Mère de Dieu . . 139

*Der Nersessian P. Nerses.* – La foi de nos ancêtres sur l'Immaculée Conception de la Ste Vierge . . . . 155

ARCHEOLOGIE

*Der Ghazarian Dr. H.* – Les monastères de Cilicie dédiés à la Mère de Dieu. 125

PHILOLOGIE

*Tcherakian P. Chérubin.* – La Mère de Dieu dans les homélies arméniennes . 145

BEAUX ARTS

*Dayan P. Léonce.* – L' Abbé Mekithar musicien (avec les hymnes dédiés à la Ste Vierge) . . . . . . 129

LITTERATURE

*Hovhannessian P. Vahan.* – «Lyre Mariale». (Poésies dédiées à la Sainte Vierge . . . . . . . . 114-116

*Hovhannessian P. Michel.* – Fleure incomparable . . . . . . 138

*Djanachian P. M.* – Expulsion . . . 143

» » » – Etoile consolatrice . 144



Direzione - Amministrazione - Pubblicità - Abbonamenti — Isola San Lazzaro - Venezia (Italia) - Tel. 60-104
Autorizzazione Tribunale di Venezia, 14 Genn. 1954, N. 153 del Registro. - Proprietario: Congr. Mechitarista di Venezia.
Direttore responsabile: P. MESROBIO Dr. GIANASCIAN. - Tipografia Armena di S. Lazzaro in Venezia



1843 ○ ՄԱՅԻՍ ԹԻՒ 5 ○ 1954


# ԲԱԶՄԱՎԷՊ

ԲԱՑԱՌԻԿ ԹԻՒ

ՆՈՒԻՐՈՒԱԾ

## Ս. ԿՈՅՍԻՆ ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԿՈՒՍԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ԿՈՒՍԱԿԱՆ կամ Մարիամու տարի հռչակուած է Եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան կողմէն՝ ներկայ տարին: Ու ի՞նչ աւելի գեղեցիկ քան Մայիսի ժպիտներուն եւ ներդաշնակութիւններուն մէջ միանալ այս սխրալի յիշատակին ու հրաւիրել մեր ընթերցողները ապրելու հոգեկան զմայլելի պահեր Ս. Կոյսին գերազանց առանձնաշնորհութեան յափշտակիչ գեղեցկութեան առջեւ, գրական ու արուեստի ստեղծագործութիւններու պրիսմակային բեկբեկումներու ընդմէջէն:

«Ես եմ անարատ յղացեալ»-ը յայտարարած է ինքը Ս. Կոյսը իր տեսիլքներուն մէջ, չորս տարի վերջ այն պատմական թուականէն՝ երբ 1854-ին Պիոս Թ. Սուրբ Եկեղեցւոյ վեհափառ Հովուապետը բովանդակ քրիստոնեայ աշխարհի առջեւ կը դնէր իր «Անճառելին Աստուած» կոնդակով Անարատ յղութեան դաւանանքը: Այդ օրէն Ս. Գրքի ու Ս. Հայրերու աւանդութեան մէջ դարէ դար փոխանցուած վարդապետութիւնը՝ իբր անժխտելի մաս հաւատոյ՝ կը պարտադրէր հաւատացեալները ու աստուածաբանները ընդունելու զայն որպէս անհերքելի վարդապետութիւն եկեղեցւոյ:

Այսօր դար մը վերջ՝ այդ յիշատակը կը կրկնուի ու Եկեղեցւոյ անսխալ Առաջնորդը եւ Գահակալը կը հրաւիրէ քրիստոնեայ մեծազանգուած համայնքը բոլոր երկիրներու՝ վերապրելու շնորհքի եւ հոգեկան վերանորոգութեան տարի մը:

Սրբազան Քահանայապետին կոչը արձագանգեց արդարեւ լայնածաւալ հորիզոններու վրայ ու եպիսկոպոսներ կազմակերպեցին տօնակատարութիւններ, ուխտագնացութիւններ, եւ աւելի ընդլայնեցին շարժումը՝ աղօթքի, զոհողութեան եւ նուիրումի թեւերով մօտենալու սրբամաքուր եւ անարատ Կոյսին, որ աղբիւրն է շնորհքի եւ օրհնութեան, հաստատելով թէ հոսումը աստուածային շնորհքին հաւատացեալ հոգիներու վրայ՝ Ս. Կոյսին




© National Library of Armenia